ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 4 *Общественные науки*

Ս. Խաչատրյան

ՄԱՅԻՍՅԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԶԱԽ-ՇԱՄՇԱԴԻՆՈՒԱ

1920 թ. մայիսյան զինված ապստամբությունը Հայաստանում, Իսթվի կոմունայից հետո, Հոկտեմբերյան Մեծ ոնոլուցիայի արձագանքների ամենախոշոր արտահայտություններից մեկն էր Անդրկովկասում։

Հայաստանում տեղի ունեցած ոնոլուցիոն շարժումները 1917–1920 թվերին աճելով՝ վերածվեցին մասսայական զինված ապստամբության։

Դաշնակցականների տիրապետության երկու և կես տարիները ոչ միայն երկրի ամբողջ էկոնոմիկայի փլուզման տարիներ էին, այլև հայ ժողովրդի ֆիզիկական ընաջնջման մի ժամանակաշրջան հանդիսացան։ Դաշնակցական հակաժողովրդական կառավարության արտաքին և ներքին քաղաքականության հետևանքն այն եղավ, որ Հայաստանը դարձավ մահվան ու արցունքի երկիր։ Այդ քաղաքականության հետևանքով Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կանգնած էին մեծագույն կատաստրոֆի առաջ։ Ազգամիջյան անվերջ պատերազմներն ու արտաքին ավանտյուրաները, սոցիալական մասսայական մահացությունը, երկրում տիրող անարխիան, աշխատավորների չտեսնված աղքատությունն ու նյութական զրկանքները, մասսաների իրավազուրկ դրությունը և այլն, օրըստօրե սրում էին դասակարգային ներհակությունները, որոնք 1919 թ. վերջերին և 1920 թվի սկզբներին փոխվեցին սուր պայքարի։

Դասակարգային պայքարի այդ լարված էտապում աճեց ու ամրացավ Հայաստանի բոլշևիկների պարտիան։ Քաղաքներում, գյուղերում և զորամասերում ստեղծվեցին բոլշևիկյան բազմաթիվ նոր կազմակերպություններ, որոնք մեծ աշխատանք էին կատարում մասսաների մեջ, ակտիվ կերպով մերկացնելով դաշնակցականների կորստաբեր քաղաքականությունը։

Հայաստանի աշխատավորների ոնոլուցիոն պայքարի ծավալման ու խորացման համար վճռական նշանակություն ունեցան 1920 թ. սկզբներին հերոսական Կարմիր Բանակի աննախընթաց հաջողությունները սովետական պետության արտաքին և ներքին թշնամիների դեմ։ Հյուսիսային Կովկասի կոնտրոեոլուցիոն-սպիտակ-գվարդիականների ջախջախման ստալինյան հանճարեղ պլանի իրականացումը որոշեց նաև անդրկովկասյան ազգային բուրժուական կառավարությունների գոյության հարցը։

Բաքվի պրոլետարիատը և Ադրբեջանի աշխատավորությունը, Կարմիր Բանակի աջակցությամբ, Ադրբեջանում ստեղծեցին սովետական կարգեր, որից հետո Հայաստանի և Վրաստանի աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ՝ նույնպես իր վերջնական ազատագրման հարցը օրակարգի խնդիր դարձրեց։

Սովետական կարգերի գոյությունը Ադրբեջանում ոտքի հանեց հայ ժողովրդի աշխատավոր մասսաների լայն խավերին։ Մայիսյան մարտական ցույցերը զինված ապստամբության նախերգանքը հանդիսացան։ Հա-

յաստանի մի շարք վայրերում ծայր առան բանվորների, գինվորների և գյուղի աշխատավորների գինված ապստամբություններ ընդդեմ դաշնակցության։ Այդ ապստամբությունների մի օղակը հանդիսացավ Ղազախ-Շամշադինի ապստամբ գյուղացիների գինված երկարատև ու համառ պայքարը, որը 1920 թ. վերջերին պսակվեց մեծ հաղթանակով։

* * *

Մայիսյան ապստամբությունը Դիլիջանի գավառում սկսվեց Շամշադինի շրջանում մայիսի 14-ին, մյուս շրջաններից անկախ, ապա այն տեղի ունեցավ Փարվանսարայի շրջանում և Ճամբարակի ենթաշրջանի գյուղերում։

Մայիսի սկզբներից Շամշադինի շրջանի կոմունիստները մեծ աշխատանք ծավալեցին աշխատավորության մեջ։ Մայիսի 9-ին Ղրղի գյուղում կոմունիստների ընդհանուր ժողովը քննելով ապստամբության հարցը, որոշում է՝ մինչև մայիսի 13-ը գյուղերում կատարել լայն նախապատրաստական աշխատանք, վերջնականապես հաշվի առնել եղած ուժերը, հատկապես աշխատանք ծավալել Զորաթան գյուղում կանգնած միլիցիոն գնդի գինվորների մեջ։ Այնուհետև ժողովն ընտրում է հինգ հոգուց բաղկացած շրջանային ղեկավարություն և երեք հոգուց բաղկացած ռևոլուցիոն կոմիտե։

Ոգևորված Ալեքսանդրոպոլի ու Կարսի ապստամբ բանվորների, գինվորների և աշխատավոր գյուղացիների հաղթանակներով, Շամշադինի շրջանի աշխատավոր գյուղացիների գիտակից տարրը, կոմունիստների ղեկավարությամբ, նախապատրաստվում էր ապստամբության, սպասելով գավառային պարտիական ժարժինների աղդանշանին, որը, սակայն, ուշանում էր։ Ինչպես որոշված էր ամսի 9-ի ժողովում, մայիսի 13-ին մի խումբ՝ թվով 50 60 մարդ, հավաքվելով Զորաթան գյուղից երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող «Մարաթա յայ» կոչված վայրում, նորից քննում են ապստամբության հարցը։ Այստեղ վերջնականապես որոշվում է ապըստամբությունն սկսել մայիսի 14-ին։ Առանձնացվում է ընդհանուր ղեկավար (հրամանատար)։

Մայիսի 14-ին, վաղ առավոտյան, հիշյալ խումբը հավաքվում է նույն վայրում։ Համաձայն մշակված պլանի, պետք էր մտնել Զորաթան գյուղը, զինաթափել ու մեկուսացնել գնդի հրամանատարական կազմը և ռեակցիոն սպայությունը, գինվորներին միացնել ապստամբներին, անցնել մոտակա մյուս գյուղերը, ամենուրեք կազմակերպել ռազմա-ռևոլուցիոն կոմիտեներ և շրջանում հայտարարել սովետական իշխանություն։ Գործելով ահա այս պլանով, նրանք հաջողությամբ հարձակվում են Զորաթան գյուղի վրա, թշնամու համար միանգամայն անսպասելի, առանց դիմադրության, զինաթափում ու մեկուսացնում են գնդի հրամանատարությունը և մի քանի սպաների։ Գունդը, ինչպես ե սպասվում էր, ամբողջովին միանում է ապըստամբներին, որի շնորհիվ ապստամբների ուժը մի քանի անգամ ավելանում է։ Գյուղացիությունը նույնպես արձագանքում է ապստամբությանը, որն արագ թափով տարածվում է շրջանի մի շարք գյուղերում, ուր կազմակերպվում են գյուղական ռևկոմներ։ Այդպիսով, օրվա վերջում՝ Զորաթան-Ղրղի ենթաշրջանի բոլոր յոթ գյուղերն անցնում են ապստամբների կողմը, իսկ մի շարք գյուղեր, որոնց թվում և շրջանի կենտրոն Բերգ

գյուղը, սովետական են դառնում մայիսի 15-ից։ Շրջանային կենտրոնը գրավելիս պատասխանատու դաշնակցական գործիչները, բեկական տարրերը առանց դիմադրության հեռանում են կամ թաքնվում։ Ապստամբները կազմակերպում են ոստիկան, գրավում են փոստ-հեռագրատունը և շրջանում հայտարարում սովետական իշխանություն։

Շրջանային ոստիկանը, կանխատեսելով դաշնակցական-կուլակային տարրերի կողմից սպասվող ամեն մի հնարավոր հակաելույթ, նպատակ է դնում նախօրոք իր ազդեցության տակ առնել շրջանի դանդաղ մասերում, ինչպես և սահմանագլխում կանգնած զինված ուժերը։ Այդ իսկ նպատակով, մինչև Բերդ գյուղի սովետական դառնալը, մայիսի 15-ին ոստիկանը հրապարակում է իր առաջին հրամանը՝ ուղղված սահմանագլխում կանգնած զորամասի հրամանատարությանը։ Այդ հրամանում ասված է.

«Ծածանելով կարմիր դրոշակը Զորաթան և Ղրղի գյուղերի ենթաշրջանի յոթ գյուղերում, կազմակերպելով գյուղական ռեոլուցիոն կոմիտեներ, գրավելով գնդի շտաբը, բանտարկելով բոլոր հրամանատարներին, առաջարկվում է հարևան Ադրբեջանի սահմանից հանել բոլոր պահակներին և անմիջապես ներկայանալ շրջանային ռևոլուցիոն կոմիտեին Զորաթան գյուղում»։

Այսպիսով, Շամշադինի շրջանի ոստիկանը վերևում հիշված իր հրամանով առաջին հերթին իրեն հայտարարում է շրջանի միակ իշխանությունը և, որպես այդպիսին, պահանջում է սահմանապահ զորամասի հրամանատարությունից անհապաղ ենթարկվել ոստիկանին՝ շրջանի օրինական ռևոլուցիոն իշխանությանը։ Այս հրամանով ոստիկանը ցանկանում է ապահովել իր թիկունքը կոնտրռեոլուցիոն հրամանատարության հնարավոր հակագործողություններից և պահանջում է մաքրել եղբայրական Ադրբեջանի սահմանը, որտեղից ապստամբական ուժերին օգնության ձեռք կարող էր մեկնել սահմանագլխում կանգնած Գարմիր Բանակը։

Բերդ գյուղը գրավելուց հետո, նախազգուշական ոչ մի հիմնական միջոցառումներ չձեռնարկելով, իրենց թիկունքը չամրացնելով, շրջանի կենտրոնում՝ Բերդում չկազմակերպելով համապատասխան քանակով կայազոր, թողնելով միայն մի քանի պահակներ, ապստամբները մայիսի 15-ին շարժվում են սահմանամերձ Թոուզ գյուղը։ Այստեղ կանգնած էր երկրորդ միլիցիոն գունդը, որը սպասվում էր թե կգիմագրի, բայց առանց դիմադրության ապստամբները տիրում են նաև Թոուզին, իսկ գնդի զինվորները միանում են ապստամբներին։

Մայիսի 16-ին սահմանամերձ ադրբեջանական Թոուզ կայարանում կանգնած կարմիր Բանակի զորամասից ներկայացուցիչ է հրավիրվում Թոուզ գյուղը։ Այդ նույն օրը տեղեկություն է ստացվում, որ դաշնակցական-կուլակային տարրերը Բերդում գլուխ են բարձրացրել, բանտարկել են պահակներին և նորից դրության տեր դարձել։ Ապստամբները, գավառային կոմիտեի ներկայացուցչի ղեկավարությամբ, Կարմիր Բանակի ներկայացուցիչ Սոկոլովսկու հետ միասին, նույն օրը վերադառնալով Բերդ, ճնշում են թշնամու դիմադրությունը, բանտարկում դաշնակցական կոմիսարին և մի քանի այլ գործիչների ու բեկերի և վերականգնում դրությունը։ Բեր-

[1] ՀԿ(բ)Կ կենտ. Կոմ. ֆ. 22, գ. 1, էջ 34։

դում հրավիրվում է բազմամարդ միտինգ, որտեղ, բացի ապստամբության ղեկավարներից, ելույթ է ունենում նաև Կարմիր Բանակի ներկայացուցիչ Սոկոլովսկին, որին աշխատավորությունը դիմավորում է մեծ խանդավառությամբ։ Խանդավառությունը հասակում է Շամշադինի աշխատավորության լայն խավերին. միտինգներ են տեղի ունենում նաև մի շարք այլ գյուղերում։ Այդ միտինգների մասին Բաքվի «Կոմունիստ» թերթը իր մայիսի 23-ի համարում գրում է.

«... Շամշադինի Մովսես, Կարմիր-Աղբյուր, Նորաշեն, Զորաթան, Լուլալի, Զինարի, Թոուզ և Բերդ գյուղերում կայացան բացօթյա միտինգներ... Կարմիր Բանակի ներկայացուցիչ ընկ. Ս. Սոկոլովսկին իրեն ճառում մատնանշեց այն հաղթանակները, որ փայլուն կերպով տանում է հերոսական Կարմիր Բանակը, մեկը մեկի ետևից խորտակելով իմպերիալիզմի վերջին հորդաները, և հրավիրեց տանջված գյուղացիներին հասկանալ իրենց դասակարգային շահերը, զոհ չդառնալ իմպերիալիզմի վարձկան ագենտների պրովոկացիաներին և հայտնել ի գիտություն կեղեքված գյուղացիներին, որ Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը եկել է դուրս կորզելու նրանց անդրկովկասյան և ...միջազգային թալանչիների իմպերիալիստական ճիրաններից։

...Միտինգը որոշեց—հայտնել ի գիտություն Սովետական Ռուսաստանին, որ Շամշադինի կեղեքված գյուղացիությունը տեր է դառել իր իրավունքներին»։[1]

Այդ հանդիպումները նշանավոր էին նրանով, որ աշխատավորության սոցիալական և քաղաքական ազատագրման հույսերն իրական հողի վրա էին դրվում։ Այդ հանդիպումներն ամբողջովին ոչնչացնում էին դաշնակցության և նրա հետ միասին մյուս կոնտրռեոլուցիոն պարտիաների պրոկովացիաները՝ ուղղված Սովետական Ադրբեջանի և սովետական ազատարար բանակի դեմ։

Կարմիր Բանակի զորամասերի հետ կապ ստեղծելու և նրա հետ հանդիպում ունենալու նպատակով, մայիսի 17-ին, մոտ 70 հեծյալ ապստամբներ, գավառային կոմիտեի ներկայացուցչի ղեկավարությամբ և Կարմիր Բանակի ներկայացուցիչ Սոկոլովսկու ուղեկցությամբ, մեկնում են Թոուզ կայարանը (Ադրբեջան), ուր միտինգ է տեղի ունենում՝ ազատության դրոշ բարձրացրած Շամշադինի աշխատավորության ներկայացուցիչների, սովետական զորամասերի և տեղի բնակչության մասնակցությամբ։ Միտինգից հետո հրավիրվում է խորհրդակցություն, որտեղ որոշվում է պատգամավորություն ուղարկել Բաքու՝ Ադրբեջանի Ռևկոմից սննդամթերք և ռազմամթերք ստանալու համար։ Պատգամավորությունը մեկնում է մայիսի 18-ին։ Սովետական Ադրբեջանի կառավարությունը մեծ հոգատարություն և եղբայրական օգնություն է ցույց տալիս Հայաստանի ապստամբ աշխատավորությանը։ Շամշադինի ապստամբած աշխատավորության ծանր դրությունը մեղմելու նպատակով Սովետական Ադրբեջանի կառավարությունը նվիրում է 17 վագոն սննդամթերք, որը, սակայն, տեղ է հասնում մեծ ուշացումով և ոչ ամբողջությամբ, Դանձակի գավառում տեղի ունեցած մուսավաթա-բեկական ավանտյուրայի պատճառով։

Մինչ այդ Շամշադինի և Քարվանսարայի շրջաններում տեղի են ու-

[1] «Կոմունիստ», 1920 թ., № 5, Բաքու։

նենում նոր իրադարձություններ. դեպքերը հաջորդում են մեկը մյուսին մեծ արագությամբ։ Շամշադինի դաշնակցական-կուլակային տարրերը չեն դադարում օգտագործելու ապստամբների թույլ տված յուրաքանչյուր սխալը և վրիպումը։ Օգտվելով հանգամանքից, որ ապստամբական ուժերի մի մասը մեկնել էր Ադրբեջան, մի մասն էլ հանգստանալով ձեռք բերված նվաճումներով՝ ցրվել էր գյուղերը, իսկ մնացած մի քանի տասնյակ ապըստամբներից վախ չզգալով՝ դաշնակցականները մայիսի 18-ին, առանց դիմադրության, տիրում են Բերդ գյուղին, շարժվում են դեպի Ղրղի և ազատում այդտեղ բանտարկված մի քանի դաշնակ-կուլակային տարրերի։ Բայց ուժ չունենալով շարունակել իրենց գործողությունները մնացած գյուղերում ևս, վերադառնում են Բերդ՝ նոր ուժեր կազմակերպելու հետագա գործողությունների համար։ Այսպիսով, կոնտրռևոլուցիոն տարրերին չի հաջողվում մի շարք գյուղերում ցրել ռեկոմները, ինչպես և չի հաջողվում վերջնականապես քայքայել ապստամբական ուժերը և ամրացնել իրենց իշխանությունը։

Շամշադինի շրջանի տերիտորիան, սկսած մայիսի 18-ից, բաժանված էր երկու հակամարտ ուժերի միջև, որոնք կանգնած էին դեմ առ դեմ, բայց ոչ մեկը և ոչ էլ մյուսը մինչև հունիսի սկզբները ակտիվ գործողություններ չէին դիմում. ստեղծվել էր մի տեսակ դադար, որը փաստորեն նախապատրաստական շրջան էր հանդիսանում կողմերի համար։ Այդ «դադարի» շրջանում ապստամբները մարտական գործողությունների չդիմեցին, որովհետև շրջանային ռևկոմը թույլ տվեց զինված ուժերի բաժանում. չկարողացավ վճռականություն հանդես բերել գրված իշխանությունը ամբողջ շրջանում ամրացնելու համար։ Թշնամին սկզբից և եթ մահացու հարված չստացավ։ Այդ դրությունը նպաստավոր հանդիսացավ հակառակորդի համար, և նա, որ սկզբից սարսափի մեջ էր, սկսեց ուշքի գալ, բայց չունենալով պատշաճ ուժեր, լայն մասշտաբով գործողությունների չդիմեց։ Այդ նույն ժամանակ Քարվանսարայում և Ճամբարակի ենթաշրջանի մի քանի գյուղերում նույնպես ապստամբություն է սկսվում։ Դիլիջանում կանգնած զինվորական կազրային մասերը դաշնակցության համար անհուսալի էին, իսկ մյուս շրջաններից ուժեր դեռևս չէին կենտրոնացված։ Չնայած որ Հայաստանի մի քանի շրջաններում ապստամբությունն արդեն ճնշվել էր (Ալեքսանդրոպոլ, Կարս, Սարիղամիշ, Նոր-Բայազետ), բայց և այնպես դաշնակցական կառավարությունը դեռևս սարսափում էր աշխատավորության նոր հույզերից։

Մայիսի 10-ին Քարվանսարայում տեղի ունեցած ապստամբությունը և ապստամբների հետագա հաջողությունները ոգևորում են Շամշադինի ապստամբներին, ամրացնում են նրանց մեջ պայքարելու կամքը և բազմապատկում նրանց եռանդը։ Չնայած կոնտրռևոլուցիային հաջողվում է Դիլիջանում ճնշել ապստամբությունը, որի հետևանքով ապստամբները նահանջում են Քարվանսարայի վրայով դեպի Ադրբեջանի սահմանը, բայց և այնպես այդ չի ընկճում Շամշադինի ռեոլուցիոն մասսաներին. նրանք շարունակում են իրենց պայքարը։

Դիլիջանից հայկական բանակի հրամանատարին ուղղված մայիսի 31-ի օպերատիվ հաղորդագրության մեջ Շամշադինի ապստամբ գյուղացիության կողմից պայքարը շարունակելու և դաշնակցական կառավարություն չճանաչելու մասին գրված էր, որ մի շարք գյուղեր (Թուզքենդ, Մովսես,

Ղուլալի և ուրիշները) կտրականապես հրաժարվում են ճանաչել կառավարության գերիշխանությունը և սկսում են տիրանալ այդ գյուղերի բարձունքներում։

Շամշադինի ռևոլուցիոն գյուղացիները չէին ճանաչում դաշնակցական կառավարությունը և հակառակ կառավարության ներկայացուցիչների պահանջի հանձնվելու մասին՝ ռևկոմը ձեռնարկում է մի շարք միջոցառումներ՝ իր ուժերը ամրացնելու նպատակով։ Միջոցառումների թվում մեծ նշանակություն է ունենում իր գինված ուժերը վերականգնելու և իշխանությունը ամբողջ շրջանում իր ձեռքում կենտրոնացնելու նպատակով մայիսի 31-ի կոչը՝ ուղղված ապստամբներին։ Այդ կոչով ռևկոմը մերկացնում է դաշնակցության կոնտրռևոլուցիոն նպատակները ե կոչ է անում Շամշադինի ապստամբ աշխատավորներին համախմբվել ռևկոմի շուրջը, զենքով պաշտպանել նվաճված, աշխատավորների շահերի միակ պաշտպան սովետական իշխանությունը։

Ռևկոմը իր կոչում գրում է.

«Ընկերներ, կոնտրռևոլուցիոն դաշնակցությունը պատրաստ է արդեն մի անգամ ևս փաթաթել իր սև լուծը մեր վզին. Նրա վարձկան ագենտները այստեղ-այնտեղ խմբեր են պատրաստում իրականացնելու այդ։ Բերդում հավաքվել են բեկերի դեկավարությամբ կոնտրռևոլուցիոն տարրերը և ձեզ գրություններ են ուղղում գնալ այդ ձեր արյունը ծծող բեկերին գլուխ խոնարհել, գանագան սպառնալիքներ են ուղղում ձեզ, որ [եթե] չընդունեք դաշնակցության լուծը, խիստ պատիժների կենթարկվեք։

Ընկերներ, եթե արյունախում, գյուղացու արյուն ծծող դաշնակցությունը ուժ ունենա, այդպես չի խոսի ձեզ հետ. նա կվարվի այնպես, ինչպես վարվեց Ալեքսանդրապոլում, կշրջապատի ե կստիպի իրեն լուծն ընդունել, բայց նա այդ չի անում, որովհետև ուժ չունի, այլ աշխատում է մի անգամ ևս խաբել մեզ իրեն թագավորությունը երկարացնելու համար։

Այդ առթիվ կոչ ենք անում ձեզ հասկանալ ձեր դասակարգային շահերը, ճանաչել ձեր դասակարգային թշնամիներին. պինդ պահել սովետական իշխանության շենքի հիմքը՝ ձեր ապստամբ գյուղերը, որի համար հարկավոր է դինակոչի ենթարկել զենք կրելու ընդունակներին, կազմակերպվել. խտացնել ձեր ռևոլուցիոն շարքերը, սպասելով վերևի՝ գավառային իշխանության կարգադրությանը։[1]

Այսպիսով, Շամշադինի ռևկոմը իր դիրքերից նահանջելու նշույլ անգամ չցուցաբերելով, միևնույն ժամանակ չունենալով դեկավար ցուցումներ, կտրված լինելով բոլոր կենտրոններից, իր նախաձեռնությամբ, իշխանությունը պահելու, այն ամրապնդելու և պայքարը շարունակելու նպատակով կոչ է անում ապստամբ գյուղերի աշխատավորությանը՝ կազմակերպել իր ուժերը դիմադրելու շրջանի մյուս կեսում ամրացած հակառակորդին։ Պարզ դիտակցելով, որ թշնամին թույլ է, որ Նրա ազդեցությունը խոշոր չափով նվազել է հենց իրեն՝ ժողովրդի մեջ, կոչ է անում ապստամբ գյուղերի ուժերին՝ չենթարկվել դաշնակցական պրովոկացիոն սպառնալիքներին, մոբիլիզացնել իր ուժերը գալիք մարտերի համար։ Այնուհետև կոչը պարզաբանում է աշխատավոր գյուղացիներին Նրանց միասնության

1 ՀԿ(բ)Պ ԿԿ կից Պարտ. Արխիվ, ֆ. 92. գ. 1. էջ 16.

անհրաժեշտության մասին, այն մասին, թե որ դեպքում նրանք կնվաճեն իրենց իրավունքները և կարժանանան Ռուսաստանի սովետական իշխանության պաշտպանությանը։

«Ի նկատի ունենալով այն հանգամանքը,—շարունակվում է կոչում,—որ ձեր իրավունքների տերը կլինեք միայն այն ժամանակ, երբ կազմակերպված, կազմ ու պատրաստ լինեք, որ ռևոլուցիոն Ռուսաստանը կօգնի ձեզ, երբ դուք կազմակերպված ասպարեզ գաք իբրև դասակարգ, որպեսզի կարմիր Ռուսաստանը հնարավորություն ունենա իմանալ որն է իր դասակարգային թշնամին, որը աշխատավոր եղբայրը, կոչ ենք անում համախմբվել մեր ռայոնական ռևկոմի դրոշի տակ նրանց, ովքեր իրենց հայվում են մեր ընկերները, ովքեր անրաժան են բանվորա-գյուղացիական կարմիր Ռուսաստանից»։[1]

Այս կոչը մայիսի լույս 31-ի գիշերը բազմացվում և տարածվում է ապստամբ գյուղերում։ Կոչը անմիջապես արձագանք է գտնում աշխատավորության լայն շերտերում։ Մյուս օրը, հունիսի 1-ին, Ղրղի գյուղն է հավաքվում ահագին զինված բազմություն, գալիս են հեծյալ և հեսևակ զինված ապստամբներ, որոնք լի էին ազատության համար կռվելու անսպառ վճռականությամբ։ Շամշադինի մայիս-հունիսյան ապստամբության մասնակիցները պատմում են, որ այդ օրը Ղրղին մարդկանցով լեցուն էր, փողոցներում շարժվելու տեղ չկար։ հավաքվել էր ավելի քան հազար մարդ։ Այս զինված ուժերը բաժանվում են վաշտերի, նշանակվում են հրամանատարներ, և ապստամբների հրամանատարությունը որոշում է ընդհանուր պաշտպանության գիծ բռնել դաշնակցության ուժերի դեմ մոտ 15 կիլոմետր ճակատով, որն աջ թևով սկսվում է Մովսես և Վերին Կարմիր-Աղբյուր գյուղերի միջև ընկած բարձունքից մինչև Մուրղուզ սարը։ Բացի այդ ընդհանուր ճակատից՝ մի վաշտ առանձնացվում և ուղարկվում է Բերգ գյուղի վրա իշխող բարձունքները բռնելու համար։ Այսպիսով, Ռևկոմը հավաքելով իր ցրված ուժերը, որոշում է պատրաստվել գալիք մարտերին, որոնք սկսվում են հունիսի 11-ից։

Ամրանալով Թոուղկալայի շրջակայքի գյուղերում, ունենալով բավարար չափով զինված ուժ, ռևկոմը և ապստամբական զորամասերի հրամանատարությունը ռազմական գործողությունների նախօրյակին տրապարակում են հետևյալ հրամանը.

ПРИКАЗ № 1

по гарнизону Красной Повстанческой армии села Тоузкала и окрестных селений

1. Объявляю для сведения жителей сел. Тоузкала и окрестных сел, что власть бывшего дашнакского правительства Армении объявляется низложенной и создается Советская власть.

2. Предлагаю жителям создать Революционный Комитет, стоящий на платформе Советской власти.

[1] ՀԿ(բ)Կ ԿԿ կից ՊԱ, ֆ. 32, գործ 1, էջ 16—17։

3. Объявляю село Тоузкала и весь Шамшадинский район на военном положении.

4. Все оружие сел. Тоузкала и всего района подлежит к [сдаче] во вверенный мне Штаб.

5. Всем командам, командирам рот и батальонов вверенного мне района приказываю представить списки лиц, желающих служить добровольно в рядах Красной Армии.

6. Предлагаю жителям, ушедшим в горы благодаря дашнакской провокации, вернуться в свои дома, к своим мирным жителям.[?]

7. Предлагаю жителям немедленно сообщить имена и фамилии укрывающих дашнаков и привести их в штаб, виновные будут наказываться как укрыватели контрреволюционеров.

8. Объявляю для сведения вверенного мне гарнизона и жителям, что мною будут расстреляны за грабеж и мародерство лица, пойманные на месте преступления, без суда.[1]

Այսպիսի հրամանի հրապարակումը հաստատում է Շամշադինում դգալի ուժ կազմող ապստամբ զորամասի առկայությունը, որի հրամանատարությունը, հաշվի առնելով թշնամու ուժերի կենտրոնացումը և պատերազմական գործողությունների մոտալուտ սկիզբը, պատերազմական դրություն է հայտարարում իր իշխանության իրավասության տակ գտնվող պատերազմական գործողությունների հնարավոր տերիտորիայում։ Ռեկոմը պատերազմական ժամանակի միջոցառումների է դիմում իր թիկունքն ապահովելու և իր ուժերը մոբիլիզացնելու համար։

Հայ աշխատավոր ժողովրդի լավագույն բարեկամներից մեկը՝ Ս. Օրջոնիկիձեն բարձր էր գնահատում իր ազատության համար դրոշ պարզած Հայաստանի աշխատավորների պայքարը, և նա մեծ հոգատարություն ու օգնություն է ցուցաբերում դեպի Հայաստանի ապստամբները։

Մայիսի 23-ին Լենինին և Ստալինին ուղարկած իր հեռագրում Ս. Օրջոնիկիձեն ապստամբներին օգնելու մասին գրում է. «Մայիսի 21-ին Քարվանսարայի գավառում հայտարարված է Սովետական իշխանություն. հայկական կանոնավոր զորքից 2 գունդ անցել են ապստամբների կողմը։ Ռեկոմը դիմել է մեզ օգնություն է խնդրում. խնդրում եմ Ձեր անհետաձգելի կոնկրետ ցուցումները։ Ցանկալի է պատասխանը ստանալ մինչև երեկո»..[2]

Ղազախ-Շամշադինի ապստամբ ուժերի մասին հունիսի 11-ին 11-րդ բանակի հրամանատարին ուղարկած իր հեռագրում Ս. Օրջոնիկիձեն գրում է. «Հենց հիմա... հազորդեցին, որ Ղազախի գավառում կան ավելի քան 1500 մարդ, սքանչելի կազմակերպված հայ ապստամբներ, անհրաժեշտ է նրանց օգնել զինամթերքով, արկերով և տալ մի դասակ հրետանի։ ...Նորից եմ հրավիրում Ձեր ուշադրությունը հայ ապստամբներին օգնելու անհրաժեշտության վրա»։

Մինչև հունիսի 11-ը հակառակորդը, գեներալ Իսկ-Մամիկոնյանի

---

[1] ՀԿ(բ)Կ ԿԿ կից Գարա. Արխիվ. Ֆ. 32, գործ 10, էջ 35—36։ Գանգանված է ուրբաթի ուղղագրությունը։

[2] Հայկ ՍՍՌ ԳԿԱ. քաղվածքների ֆոնդ, գործ 104, էջ 15։

[3] ԱՊԳԱԿԱ Ֆ. 195 օպ. 4. ա. 143. ա. 1

հրամանատարությամբ. Շամշադինում գործքեր է կենտրոնացնում։ Թշնամին ուժեղ նախապատրաստություն է տեսնում. ուժերի դասավորում ու տեղաշարժեր է կատարում հարձակման նպատակով։ Հակառակորդի բոլոր նախապատրաստությունները ապստամբներին հայտնի էին։ Ապստամբներն իրենց հերթին որոշ ուժերի դասավորում են կատարում, հետախուզում են թշնամու հարվածի ուղղությունը և այլն։ Եվ իրոք, հունիսի 11-ին կառավարական գործքերի հրամանատարությունն անցնում է հարձակման։ Առավոտյան ժամը 4-ից սկսվում են մարտական գործողություններ, որոնք տևում են յոթ ժամ։ Կռիվը այդ օրը վերջանում է նրանով, որ դաշնակցական գործքերը ապստամբների ճնշման տակ ետ են քաշվում իրենց ելման դիրքերը, տալով որոշ կորուստ։ Ապստամբների հերոսական դիմադրությունն ընկճելու կառավարական գործքերի հրամանատարության ջանքերն ապարդյուն են անցնում, նրանք չեն կարողանում ընկճել ապստամբների հերոսական դիմադրությունը։ Հունիսի 11-ին տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքը և հետևանքները սաիպում են թշնամուն համոզվելու, որ նա գործ ունի կազմակերպված, հերոսաբար կռվող, ռազմական տակտիկայով մարտեր վարող և անձնվեր մարդկանց հետ, որոնք այդ օրը ոչ մի քայլ չնահանջեցին։ Այդ դրությունը հակառակորդին սաիպում է նոր, լրացուցիչ ուժերի պահանջ դնել։

Ակտիվ գործողությունները վերսկսվում են հունիսի 18-ից։ Հունիսի 18—19-ին թեժ մարտեր են տեղի ունենում։ Լրացուցիչ ուժեր ստանալով, թշնամին նորից հարձակման է անցնում։ Չնայած հակառակորդի գերակշռող ուժերին, ռազմական միջոցներին, այնուամենայնիվ նրան չի հաջողվում հասնել վճռական հաջողություններ։ Տակտիկական նկատառումներով ապստամբները թողնում են իրենց պաշտպանության առաջին գիծը և ամրանում են բարձունքներում, կենտրոնանալով Պառավաքարի և Օձաքարի շրջանում։ Իրենց ձեռքում պահելով Կարմիր-Աղբյուր գյուղը և նրա շրջակայքը, ապստամբները հերոսաբար են դիմադրում թշնամու մեծաքանակ ուժերի հունիսի 21-ի հարձակմանը։ Թեժ մարտերից հետո հակառակորդի հարձակումները ետ են մղվում նրա համար մեծ կորուստներով։ Ապստամբները նախապատրաստվում են հակահարձակման։

* * *

Հունիսի 22-ին Ղազախ-Շամշադինի ապստամբական ուժերի հրամանատարությունը, համաձայն նախօրոք մշակված պլանի, ուկոմի որոշմամբ ընդհանուր հարձակում է սկսում ինչպես Շամշադինի, այնպես էլ Քարվանսարայի շրջաններում։ Հունիսի 22-ին ապստամբ բանակի Քարվանսարայի դրաչխումբը ջախջախելով թշնամու գիմադրությունը, գրավում է Քարվանսարան։

Շամշադինի երկու դրաչխմբերը, գարդացնելով թշնամու ուժերի վրա գործադրվող ճնշումը, չդադարեցնելով հակառակորդի ահաբեկված ուժերի հետապնդումը, դուրս են քշում նրան շրջանի տերիտորիայից։ Այդ օպերացիայի ընթացքում ապստամբները հակառակորդից վերցնում են 26 գերի, գրավում են մի լեռնային հրանոթ, երկու ռմբաձիգ, երկու հաստոցավոր գնդացիր, մի կենսամթերքի պահեստ և այլ ռազմամթերք։ Այսպի-

սով՝ Շամշադինի ապստամբ զորամասերի դրամանատարության համաձայն ու մտածված պլանի հաջող իրականացման հետևանքով թշնամին ետ է շպրտվում, և Շամշադինի շրջանը հունիսի 23-ին լրիվ մաքրվում է հակառակորդի մնացորդներից։

Այդ մարտերի ընթացքի, ապստամբների ուժերի և դաշնակցական զորքերի պարտությունների մասին Դիլիջանի գավառային կոմիսարին հետաքրքրքրական զեկուցագիր է ուղարկում նույն գավառի չորրորդ գավառամասի կոմիսարը։ Չնայած զեկուցագրում գիտակցաբար թույլ են տրված մի շարք աղավաղումներ, չափազանցված են կառավարական և խմբապետամուզերիստական ուժերի առանձին հաջողությունները, դրանով իսկ կեղծելով հունիս ամսին տեղի ունեցած մարտերի արդյունքները, բայց և այնպես դաշնակցական կոմիսարը իրական դրությունը մինչև վերջը թաքցնել չէր կարող։ Զեկուցագրում հագորդված են մեզ հետաքրքրող մի շարք դեպքեր։ Այդ փաստաթղթում, որը գրված է հունիսի 26-ին, ասված է.

«Ամսի 11-ին, հաժաձայն գեներալ Իսկ-Մամիկոնյանի կարգադրության, սկսվեց հարձակում Լբդի գյուղի վրա, որտեղ ամրացել էին բոլշևիկները։ Կռիվն սկսվեց առավոտյան ժամը 4-ից և տևեց մինչև ժամը 11-ը։ Ժամի 11-ին մեր զորքերը ետ նահանջեցին, ունենալով 8 վիրավոր գինվոր և մեկ սպանված սպա։ Գ. գեներալը դատելով, որ մեր ուժերը շատ քիչ են համեմատաբար թշնամու զորքերի հետ, որոնք ունեին, հակառակ գեներալի սպասածի, թնդանոթ և գնդացիրներ և որոնք լավ կազմակերպված էին, բռնեց պաշտպանողական դիրք և պահանջեց նորից զորք։ Ամսի 18-ին նաուր գյուղը մտավ Ռ-րդ գնդի 3-րդ գումարտակը պար. Մուրադի զեկավարությամբ։ Ես և գեներալը գնացինք նրանց դիմավորելու և նույն օրը գեներալը կարգադրեց Մուրադին հարձակվել Զինչին գյուղի վրա և վերցնել Թոուզ գյուղի բարձունքը, որը պաշտպանում էին Թաթլուեցիք, Թոուզեցիք և Ներքին-կարմիր-աղբյուրեցիք։ Մինչ այդ պատրաստությունը կտեսնեին, ներկայացան Զինչինեցիք և հայտնեցին իրենց հպատակությունը... Ամսի 19-ին Մուրադը իր գումարտակի երեք վաշտերով հարձակվեց Թշնամու դիրքերի վրա և 15 րոպե կռվելուց հետո գրավեց բոլոր դիրքերը, իսկ Թշնամին դիմեց փախուստի։ Այդտեղ ներկայացան Թոուզ գյուղի ներկայացուցիչները և հայտնեցին իրենց հպատակություն։ Զորքը բռնելով բարձրությունները, անցավ գյուղը և պահանջեց գյուղից տալ 500 հրացան, 40 հազար փամփուշտ և բոլոր չարագործներին, որոնց թիվը հասնում էր 32-ի, իսկ պակաս ներկայացնելու դեպքում գյուղը պարտավոր էր ամեն մի հրացանի համար վճարել 20 հազար ռուբլի, ամեն մի չներկայացրած փամփուշտի համար 100 ռուբլի և ամեն մի չներկայացրած չարագործի համար 15 տարի և 5 ձի։ Գյուղը երկրորդ օրը արդեն հավաքել էր մոտ 100 հրացան, 21 հազար փամփուշտ և ձերբակալված էին 15 չարագործ։

... Պետք է հայտնեմ, որ դրա նախընթաց օրը գեներալը կարգադրել էր Մուրադին հարձակվել Թաթլուի վրա և գրավել նրա բարձունքները, որոնք էին՝ Պառավաքար և Օձաքար, որտեղ ամրացել էին բոլշևիկները։ Չգիտեմ ինչու գեներալը երկու օր դյուղը՝ Թաթլուն պաշարել էր և հարձակման չէր դիմում, այլ աշխատում էր խաղաղ միջոցով մտնել դյուղը և գրավել, չնայած որ նրա բոլոր ուղարկված դելեգատները վերադառնում էին և հայտնում էին, որ նրանք լսել անգամ չեն ուզում մեր առաջարկները։

Այս դանդաղկոտությունից օգտվեց Քշնամին և ավելի ևս ամրապնդվեց։ Հարձակումը տեղի ունեցավ 21-ին և վերջացավ նրանով, որ Մուրադը սպանվեց Օձաքարի մոտերքին ու ամբողջ զորքը վերադարձավ յուր հին դիրքերը, ունենալով մի քանի սպանված զինվոր, մեկ վիրավոր սպա և 7—8 վիրավորներ։

...Ամսույս 22-ի առավոտյան երբ ես զբաղված էի զորքի համար մթերքներ ճարելով և արաբաներ հանելով վիրավորներին Թոուզից Դաուր տեղափոխելու համար, եկավ ինձ մոտ մի գյուղացի և հայտնեց, որ դինեբալը վերցնելով զորքին փախել է, թողնելով թնդանոթներից մեկը Քշնամուն։ Ես կարծելով, որ դա պրովոկացիա է, ուղարկեցի իսկույն մի միլիցիոներ տեղեկություն բերելու համար... Վերադարձավ... և հայտնեց, որ այդ բոլորը հիշտ է։ Այս տեղեկություններն իմանալուն պես, գյուղումս աղատ թողնված չարագործները իսկույն ևթ անցան գործի և սկսեցին ձերբակալել տեղում գտնված զինվորներին և գրավեցին պահեստը։ Տեսնելով այդ, ես ուզեցի խանգարել, բայց ոչ մի միլիցիոներ ինձ մոտ չգտա, բացի միլիցիոներ Ա. Մկրտչյանից, որի հետ միասին ոչինչ չէր հնում անել, բացի փախչելուց և մենք փախանք ոտքով, ձորերով և անտառներով։ Գյուղացիք նկատելով մեր բացակայությունը, սկսեցին մեզ հետապնդել, բայց որովհետև մենք արդեն անտառումն էինք, ուստի չկարողացան մեզ գտնել։

...23-ին ես զորքին գտա միայն Մուրղուզ սարի լանջին։ Այդ նույն օրը Լևոն բեկը իր տղաներով և մի թնդանոթով կռվում էր Քշնամու դեմ տեղեկություն չունենալով գեներալի այդ փախուստի մասին և ես միայն ճանապարհից նրան տեղեկացրի եղածի մասին։ Փախուստի ժամանակ բոլոր վիրավորները և Մուրագի դիակը գերի մնացին։[1]

Այսպիսով, հիշյալ զեկուցագրում բերված փաստերը կրկին անգամ հաստատում են, որ մայիսյան զինված ապստամբությունը Երլբշանի գավառում փոխվեց կատաղի բնույթ կրող քաղաքացիական պատերազմի և շարունակվեց մինչև հուլիսի սկիզբները։

Այդ զինված պայքարը, որն ընդգրկել էր Դիլիջանի գավառի Քարվանսարայի, Շամշադինի շրջանները և Ամբարակի ենթաշրջանը, զեռ մայիսի երկրորդ կեսին և հունիս ամսին՝ կրում էր բավականաչափ ընդարձակ ռազմական գործողությունների բնույթ, որոնք ավելի մեծ չափերի հասան հատկապես Շամշադինի շրջանում։ Երկու կողմերն էլ փոխադարձաբար հարձակողական գործողություններ էին վարում։ Ինչպես հաստատում են փաստերը, ապստամբների կազմակերպված և քաջարի պայքարն ընկճում, թուլացնում է դաշնակցական զորքը, քայքայում նրա մարտունակությունը։ Կառավարական զորքերի հրամանատարությունը, որը որոշել էր լրացուցիչ ուժեր ստանալով հարձակման անցնել, իր սկզբնական մտադրությունից հրաժարվում է. նախ՝ բոլշևիկյան ուժերի քանակի, կազմակերպվածության ու քաջարի դիմադրության հետևանքով, և դրա հետ միասին հաշվի առնելով նաև այն, որ ապստամբների անընկճելի դիմադրությունը բարոյալքում էր կառավարական բանակի զինվորներին. հետևապես միանգամայն հակառակ հետևանքներ էին ստացվում։

Ապստամբների կողմից հունիսի 23-ի մարտերի ժամանակ գերված զինվորները պատմում էին, որ դաշնակցական բանակի զինվորների մեծամասնությունը կարմիր բանակի դեմ կռվել չի ցանկանում և այդ իսկ պատճա-

[1] Հայկ. ՍՍՌ ԳԿԱ, ֆ. 69 ը 201, գ. 1741 թ 94—95։

ով հենց որ պայթյուններ լսվեցին նրանց դիրքերում. նրանք սկսեցին փախչել Զինչինից դեպի Նաուր գյուղը։

Դաշնակցական բանակից Ղազախ-Շամշադինի ապստամբների կողմն են անցնում մեծ թվով զինվորներ, որոնք հասկանում էին ապստամբների նպատակները և դաշնակցականների քաղաքականության կորստաբեր լինելը հայ ժողովրդի համար։ Նրանք Ղազախ-Շամշադինի ապստամբ գյուղացիների հետ միասին հետագայում կազմեցին Կարմիր Բանակի հայկական զորամասերի կորիզը։ Դաշնակցական մամուլը հրապարակում է Կարմիր Բանակի կողմն անցած այդ զինվորների միայն մի չնչին թվի մասին, նրանց կատարած իսկական հայրենասիրությունը անվանելով «հայրենադավ» արարք։

Դաշնակցության օրգան «Հառաջը» գրում էր. «Սակայն անկարող ենք խոր ցավ ու կսկիծ չզգալ, որ գտնվեցին վաճառված մարդիկ նաև հայ հայրենասեր ու անձնվեր բանակի շարքում»[1]։ Եվ հայտարարելով մամուլում միայն 46 զինվորների և սպաների ազգանուններ, ավելի քան 600 զինված զինվորների փոխարեն, «Հառաջը» գրում էր. «Այս մի ավելորդ ապացույց է միայն այն բանի, որ դարանակալ թշնամին շատ լավ ու խոր է տարածել իր ոճրագործ ցանցերը, որ արմատախիլ անելու համար պիտի տանել անդուլ, արթուն ու համառ պայքար»[2]։

Մայիսյան ապստամբությունը ցույց տվեց, որ դաշնակցական բանակի զգալի մասը սթափվում էր դաշնակների խաբեությունից և անցնում էր աշխատավոր ժողովրդի կողմը։ Այս պարզ ապացույց էր, որ դաշնակների արյունարբու դիկտատուրան արդեն մնանկացել էր ու աշխատավորությունը կամենում էր վերջ տալ դաշնակցության դիկտատուրային, հայ բուրժուազիայի, կուլակության, խմբապետական կարգերին և ստեղծել ժողովրդի իսկական շահերն արտահայտող իշխանություն՝ Սովետական իշխանություն։ Ահա թե ինչու կոմունիստական պարտիայի աշխատանքը բանակում մեծ արձագանք գտավ մինչև մայիսյան ապստամբությունը և ամբողջ խորությամբ դրսևորվեց մայիսյան ապստամբության ընթացքում։

* * *

Շամշադինի ճակատամասում ապստամբական ուժերի մարտական գործողությունները չեն դադարում մինչև հունիսի 27-ը։ Քարվանսարան հանձնելուց և այդ ճակատամասի ապստամբական ուժերի դեպի Աղբրեջան նահանջելուց հետո էլ դեռ պայքարը շարունակվում էր։ Հունիսի 26-ին, Քարվանսարայի խմբի նահանջից երկու օր հետո, Շամշադինի ճակատամասին վերաբերող մի շտաբային տեղեկագրում ասված է, որ Շամշադինի մարտական ճակատամասն ընդգրկում է «Ձախից Մուրղուզ սարի ստորոտից սկսած մինչև Նաուր գյուղի Խաչբուլաղ կոչվող ձմեռանոցը և աջից՝ Ղզլդաղ բարձունքից սկսած մինչև (մի բառ ազավաղված) գյուղը ներառյալ, որը գրավվում է առաջին հրաձգային գնդի կողմից, Խաչբուլաղ և Ղզլդաղի մի չնչին մասը գրավվում է պարտիզանների կողմից...»

[1] «Հառաջ», № 154, 1920 թ. Երևան։
[2] Նույն տեղ։
[3] ՍՍԱԿԱ. ֆ. 195, оп. 4, д. 454, л. 8.

Սրանից պետք է եզրակացնել, որ մինչև հունիսի 26-ը ներառյալ Շամշադինի շրջանում գործող ապստամբական խումբը գրավում էր շրջանի մի մասը, ամրացած էր բավականին հարմար տեղանքում և բոլորովին մտադիր չէր նահանջելու։ Սակայն հակառակորդի մեծաքանակ ուժերին դիմադրություն կազմակերպելու նպատակով ապստամբական ուժերի հրամանատարությունը որոշում է հունիսի 26-ից վերախմբավորել իր ուժերը և ավելի հարմար տեղանքում կենտրոնացնելով, պատրաստվել նույնիսկ հարձակման։

Շամշադինի ապստամբների մտադրությունը՝ չթողնել շրջանը, դիմադրել հակառակորդին՝ թեկուզ պակաս ուժերով, ռազմամթերքի, սննդամթերքի մեծ պակասի պայմաններում՝ վկայում է ապստամբների վճռականությունն ու հաստատակամությունը։

Հունիսի 27-ին ապստամբական ուժերի Շամշադինի խմբի հրամանատարությունը և Դիլիջանի ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի ներկայացուցիչը կարգադրություն են ստանում թողնել Շամշադինը և նահանջել Սովետական Ադրբեջան։ Այդ կարգադրությունը Շամշադինի ապստամբների սրտին մոտիկ և ընդունելի կարգադրություն չէր, որովհետև նրանք քաջ գիտակցում էին, թե իրենց նահանջից հետո ինչ է սպասում ռեոլուցիոն գյուղերին, իրենց ընտանիքներին։ Բացի այդ, նրանք ուներին մինչև վերջը պայքարելու անհողդողդ կամք, բայց կարգադրությունը անհրաժեշտ էր կատարել, և նրանք նահանջեցին։ Շատերը հարկադրված նահանջում էին ընտանիքով։

Հայաստանի բանվորների և գյուղացիների մայիսյան հերոսական գինված ապստամբությունը ժամանակավորապես ճնշվելուց հետո Հայաստանի ապստամբական զորամասերը, մեծ մասամբ կազմված Ղազախ-Լամշադինի ապստամբ գյուղացիներից, նահանջում են Սովետական Ադրբեջանի տերիտորիան և նրանցից մոտ 1000 մարդ, լի պայքարի վճռականությամբ, սովետական կարգերին մինչև վերջը նվիրված, ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի առաջարկությամբ տեղափոխվում են Բաքու և մտնում 11-րդ բանակի շարքերը, որպեսզի շարունակեն իրենց պայքարը հայ ժողովրդի ազատագրման համար։

Ղազախ-Շամշադինի ապստամբ գյուղացիների ներկայացուցիչները հուլիսի սկզբներին մի դիմում են ուղղում Ադրբեջանի Կ(բ)Պ Կենտկոմին և խնդրում այդ մասին տեղյակ դարձնել Լենինին։ Այդ դիմումի մեջ ասված է.

«Սույն թվականի մայիս ամսի 15-ից մինչև օրս ապստամբ կարմիր գյուղացիությունը, թոթափելով իր վրայից դաշնակցական կառավարության լուծը, Ղազախ-Շամշադինի շրջանում հայտարարեց սովետական իշխանություն։ Ամբողջ Շամշադինի շրջանը՝ 14 գյուղ, 30 հազար բնակիչներով, մեկ ու կես ամսվա ընթացքում ամուր բռնել են Մուրդուզի լեռները, իսկ Քարվանսարայի շրջանում, Ադրբեջանից սկսած մինչև Քարվանսարա քաղաքը մայիսի 15-ից սկսած քաղաքացիական կռիվ է դնում, որի ընթացքում Քարվանսարան ձեռքից ձեռք է անցնում։ Հիշյալ շրջանների ապստամբած գյուղացիությունը մեզ ուղարկել է իբրև պատվիրակ Բաքու՝ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմ, որ արտահայտիչ լինենք ապստամբած գյուղացիության կամքի, որն այլևս չի ցանկանում տանել հայ դաշնակցական կառա-

վարության լուծը և մեզ պարտավորեցրել է հայտնել այդ մասին ի դիտություն սովետական կենտրոնական իշխանությանը և հայտնել կտրականապես, որ անկարելի է կրկին վերադառնալ դաշնակցական դավաճան կուսակցության իշխանության ատակ...

Հայտնելով այդ մասին, թախանձագին խնդրում ենք Ղազախ-Շամշադինի ապստամբ գյուղացիության անունից հաղորդել Մոսկվային այդ շրջանի բնակիչների անսասան կամքը, որ ծարավ է սովետական իշխանության հովանավորության և իրական օգնության, իր հողը պաշտպանելու դաշնակցական գորքի ներխուժումից։[1]

1920 թ. հուլիսի 27-ին Ղազախ-Շամշադինի ապստամբներից 11-րդ բանակի 280-րդ գնդի կազմում կազմակերպվում է 3-րդ գումարտակը։ Սա Կարմիր Բանակի հայկական առաջին գումարտակն էր սովետական ռազմական ուժերի կազմում։ Բացի այդ՝ մի նոր գումարտակ է կազմակերպվում 11-րդ բանակի հայ մարտիկներից 281-րդ գնդի կազմում։ Այսպիսով, հայ ժողովրդի ազատագրման գործին մեծագույն չափով նպաստելու և այն արագացնելու նպատակով Ադրբեջանական Սովետական Ռեսպուբլիկայի տերիտորիայում ստեղծվում են ապագա Սովետական Հայաստանի առաջին ռազմական ուժերը։

Հայ ժողովրդի լավագույն բարեկամներ, Լենինի-Ստալինի ժարտական զինակիցներ՝ Սերգո Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ա. Միկոյանի անմիջական ցուցումներով ու հոգատարությամբ, Ադրբեջանի սովետական իշխանության և Բաքվի պրոլետարիատի ամենաջերմ աջակցությամբ կազմակերպվում և մարզվում են Կարմիր Բանակի հայկական առաջին ստորաբաժանումները։ Հիշված գումարտակները Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար կռվող դինված ուժերի կորիզն էին կազմելու։ Մինչև նոյեմբերի կեսերը, կանգ չառնելով ոչ մի գժվարության առաջ, անցնում են ռազմական-քաղաքական մեծ շկոլա, պատրաստվում են դալիք պայքարի համար։ Կարմիր Բանակի այդ կադրային ստորաբաժանումների անձնակազմի և հրամանատարների ամբողջ ցանկությունն էր՝ շտապեցնել Հայաստանի աշխատավորության ազատագրումը դաշնակցականների անտանելի ծանր լծից։ Հեռու չէր այդ օրը և նա եկավ։ 1920 թվի նոյեմբերի 10-ից բոլոր հայ կարմիրբանակայինները կենտրոնացվում են 280-րդ գնդում, որը անվանվում է 11-րդ բանակին կից առաջին հայկական գունդ, իսկ հետագայում՝ հայկական առանձին գունդ։ Նոյեմբերի երկրորդ կեսին գունդը կենտրոնացվում է Հայաստանի սահմանագլխում, իսկ նոյեմբերի 29-ի լուսաբացին այդ գունդը, Կարմիր Բանակի մյուս զորամասերի հետ միասին, աննկարագրելի խանդավառությամբ ոտք է դնում Հայաստանի սահմանը, օգնելով Հայաստանի բանվորներին ու աշխատավոր մասսաներին ստեղծելու սովետական կարգեր։

Հայաստանի բանվորների ու գյուղացիների ժայիսյան դինված ապըստամբության պատմության մեջ Ղազախ-Շամշադինի ռևոլուցիոն գյուղացիությունը Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի տեղական կազմակերպությունների ղեկավարությամբ նշանակալից գեր է խաղացել։

[1] ՀԿԱ 19 44 կից ՊԱ, ֆ. 32, գ. 10, էջ 30—31։

Ղազախ-Շամշադինի և Ծամբարակի շրջանների մի շարք գյուղերի աշխատավոր գյուղացիների զգալի տոկոսը բանվորական անցյալ ուներ, նա դաստիարակվել էր Բաքվի և Անդրկովկասի բանվորական մյուս վայրերի պրոլետարիատի ոհոլուցիոն պայքարում և կապված էր Սովետական Ադրբեջանի հետ։ Իրանով պետք է բացատրել, որ դաշնակների դեմ դուրս եկած Ղազախ-Շամշադինի աշխատավորությունը մեծ տոկունություն և վճռականություն ցուցաբերեց։ Այդ պայքարում առանձնապես աչքի ընկան այնպիսի ոհոլուցիոն գյուղեր, ինչպիսիներն էին Ղրղին (դաշնակցականները այդ գյուղը համարում էին «օձի բույն» գյուղացիների հիմնական մասի ռեոլուցիոն տրամադրությունների պատճառով), Սև քարը (այս գյուղից 280-րդ գնդի կազմում կային 72 ապստամբ գյուղացիներ), Քրգևանը (Ենոքավանը, որը կրում է մայիսյան զինված ապստամբության հերոս, դաշնակների կողմից գնդակահարված Ենոք Մկրտումյանի անունը), Ջարխեջը, Զինչինը, Վերին Կարմիր-Աղբյուրը, Կարմիր գյուղը, Ներքին Ծամբարակը, Թթու-Ջուրը և այլ գյուղեր։ Շամշադինի և մյուս վայրերի գյուղացիներից կազմված հայկական առաջին գունդը իր պայքարով և տրադիցիաներով մեծ մասնակցություն ունեցավ 1921 թվականի դաշնակցական ավանտյուրայի ջախջախման և Հայաստանում վերստին և վերջնականապես սովետական կարգեր հաստատելու գործում։